

Գիւղիս բնակիչներն մեծ մասամբ բաւականին լաւ սպորուստ ունին, բացի ցանքէ կը անուցանեն զոմէշ, եզ, կով, ոչխար:

Գիւղս ճանապարհի վերայ լինելով՝ միշտ աւերման ենթարկուած է, վասն որոյ ծառ ու ծառաստան չկայ: Կայ մի նորաշէն Եկեղեցի: Գիւղս երբէք ուսումնարան չէ ունեցած, որպէս կը պատմեն ծերունիք, այժմ ևս ոչ ուսումնարան և ոչ քահանայ ունին, ժողովուրդն վերին աստիճանի տգէտ ու կոպիտ է, շահամոլութիւնը միմիայն բոյն է զրած որոց սրտերուն մէջ, սակայն դարձեալ իւրեանց նպատակին չեն հասնիր:

Շարունակ շփուելով անց ու դարձ անողներու հետ՝ անբարոյականութիւնը ևս բաւական մեծ տեղ բռնած է այստեղ:

Գիւղս հնութիւններու չեմ պատահած, միայն 2—3 մեթր խոր հողի մէջէն մի տապանաքար հանուած տեսայ, որոյ վերայ կը տեսնուէր տեսակ մի դժեր գրի ձեռով, սակայն անընթեռնելի:

Գիւղս տեսած եմ մի ձեռագիր Աւետարան, առաջի 25—30 էջերն ամբողջ նկարներ էին և Բրիստոսի կեանք և զործը ներկայացնող: Սորա յիշատակարանն ևս ընդօրինակած եմ, բայց զժբաղդաբար սա ևս վիճակուած է փոշւոյ մէջ մնալ:

Մ Ա Ն Ա Ս

Որպէս ամեն գիւղ ունի իւր մեծատունը, նոյնպէս ևս լսած եմ հետեւեալ աւանդութիւնը Չլիանուայ Մանասի վերայ:

— Զրլիանի եղած է Մանաս անունով մէկը, որ ունէր հինգ ձիւղ ոչխար, անհաշիւ եզ, կով և զոմէշ: